ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ

02.05.2022 20:03

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը հյուրընկալել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորներ **Թիմ Էյքին**, **Մատտիաս Գույոմարին** և **Արմեն Հարությունյանին**:

Փաստաբանների պալատի նախագահը, ողջունելով հյուրերին, ներկայացրել է Փաստաբանների պալատի կառուցվածքը, գործառույթները և խոսել Հայաստանում փաստաբանական գործունեության առանձնահատկությունների մասին:

Դատավորների պատվիրակությունը շրջայց է կատարել Փաստաբանների պալատի վարչական շենքում, Փաստաբանական դպրոցում և Հանրային պաշտպանի գրասենյակում:

ՀՀ Փաստաբանական դպրոցի տնօրեն Արա Ջոհրաբյանը դատավորներին ներկայացրել է դպրոցում ընդունելության և ըստ մասնագիտացումների ուսուցման կարգը:

Այնուհետև, Հանրային պաշտպանի գրասենյակում շրջայցի ընթացքում գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանը պատվիրակություններին ներկայացրել է հանրային պաշտպանների գործունեությանը, դատական գործերում նրանց կողմից ներկայացուցչություն կամ պաշտպանություն իրականացնելու պայմանները:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })